ԴԵՐԱՆՈՒԱՆ ԹՈՒԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԿԱՐԳԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ ՀԻՆ ՀԱՅԵՐԷՆՈՒՄ

ԼԱԼԻԿ ԽԱՉԱՏՐԵԱՆ (lingualal51@mail.ru)

ՄՈՒՏՔ

Թուի քերականական կարգն արտայայտում է քանակայնութեան գաղափար եւ տարածւում է հաշուելի առարկաների վրայ. ընդ որում՝ այն արտայայտում է ոչ թէ հաշուելի առարկաներ, այլ մէկի (եզակիի) եւ մէկից աւելիի (յոգնակիի) քանակային յարաբերութեան գաղափար: Քանակի կամ թուի ըմբռնումը ներառում է եզակի (մէկ) եւ յոգնակի (մէկից աւելի) հասկացութիւններ, եզակի եւ յոգնակի յարաբերակցութեան ոլորտում եզակի թիւը ներկայացնում է յարաբերակցութեան առաջին եզրը եւ ցոյց է տալիս, որ դիտարկուող առարկան մէկն է, իսկ յոգնակին ներկայացնում է յարաբերակցութեան երկրորդ եզրը՝ ցոյց տալով, որ դիտարկուող առարկաները քանակի տեսակէտից մէկից աւելին են:

Հայերէնում գոյականի եզակի թիւը նշոյթաւորուած չէ. իբրեւ քերականական իմաստի արտայայտման միջոց՝ հանդէս է գալիս բառի ուղիղ ձեւը, որ յատկանշւում է զրօ ձեւոյթով: Ի հակադրութիւն զրօ ձեւոյթի՝ յոգնակի թիւը նշոյթաւորուած է. յոգնակիութեան գաղափարն արտայայտւում է թուանիշ թեքոյթների միջոցով, որոնք բառը (բառոյթը) վերածում են բառաձեւի: Թուի քերականական կարգը յատուկ է հիմնականում գոյական անուններին[1], միւս խօսքի մասերն ունեն թուի շարահիւսական կարգ, ինչպէս ածականը[2], թուականը, դերանունը եւ բայը:

Հին հայերէնում թուականների եւ ածականների, ինչպէս նաեւ դրանց փոխարինող դերանունների արտայայտած յոգնակին յարաբերակից է գոյականներին, ընդ որում՝ ածականի եւ թուականի յոգնակի թուով գործածութիւնը պայմանաւորուած է յոգնակի կամ անեզական գոյականներին համաձայնելու շարահիւսական յատկանիշով: Բայի թիւն արտայայտում է գործողութիւն կատարողի քանակի գաղափար. գործողութիւն կատարողը կարող է լինել մէկը կամ մէկից աւելին:

Դերանունները, բացի ձեւակազմական իւրայատկութիւններից, այս հարցում որոշակի իւրայատկութիւն են դրսեւորում. թուի կարգի կարգա-

---

[1] Լ.Մ. Խաչատրեան, «Գոյականի թուի քերականական կարգի արտայայտութիւնը հին հայերէնում», *Լրաբեր հասարակական գիտութիւնների*, 1:2022, էջ 125-40:

[2] Լ.Լ. Խաչատրեան, «Ածականի թուի քերականական կարգի արտայայտութիւնը հին հայերէնում», *Բանբեր հայագիտութեան, Հայագիտական միջազգային հանդէս*, 2:2021, էջ 197-212. նաեւ՝ Լ.Մ. Խաչատրեան, «Ածական // գոյական տարարժէք բառերի թուկազմութիւնը հին հայերէնում», *Պատմաբանասիրական հանդէս*, 2:2021, էջ 225-37:

յին անդամները քերականօրէն եւ բառայնօրէն տարբեր արտայայտութիւններ ունեն:

Թեքուող խօսքի մասերի համակարգում յոգնակերտութիւնը եւ հոլովակազմութիւնը համատեղւում են բառաձեւերի միեւնոյն կաղապարներում, հետեւաբար այդ միաւորները դիտւում են իբրեւ յոգնակիակազմ-հոլովակազմ հիմքերի եւ յոգնակերտ-հոլովակերտ վերջաւորութիւնների զուգորդումներ[3], ինչպէս՝ տիտան-աց, աստեղ-աց, բան-ից, երկու-ց, գեղեցկագուն-ից (յոգնակի թիւ, սեռական հոլով), տիտան-աւք, աստեղ-աւք, երկու-ք, գեղեցկագուն-իւք (յոգնակի թիւ, գործիական հոլով): Այս յատկանիշը կցական կառուցատիպի լեզուների տիպաբանական բնութագրիչներից է:

Մասնագիտական գրականութեան մէջ ընդունուած է այն տեսակէտը, որ թուի քերականական կարգը հիմք-լեզուում (նախալեզուում) արտայայտւում է ներքին թեքման միջոցով[4]: Սակայն դա չի նշանակում, որ հիմք-լեզուից ճիւղաւորուած բոլոր լեզուները պահպանել են քերականական իմաստի արտայայտման այդ միջոցը: Լեզուական իրողութիւնների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ թուի քերականական կարգը հին հայերէնում այլ դրսեւորում ունի. եթէ հին հայերէնը հոլովման համակարգում իշխող ձեւով պահպանել է հին-նախալեզուի թեքականութեան յատկանիշը՝ ինչպէս՝ ձուկն--ձկան--ձկունք--ձկանց, մատն—մատին--մատունք—մատանց, ապա թուի քերականական իմաստի արտայայտման առումով նոր միջոց է ձեռք բերել՝ մասնիկաւորում կամ կցականութիւն, ինչպէս՝ Ի (բան-ի եւ բան-ից), Ո (գետ-ոյ եւ գետ-ոց), Ու (զարդ-ու եւ զարդ-ուց), Ի-Ա (քաղաք-ի եւ քաղաք-աց), Ո-Ա (պատանու-ոյ եւ պատանե-աց) եւն.: Ինչպէս երեւում է բերուած օրինակներից, թուակազմութիւնը իր հիմնական արտայայտութիւններով համընկնում է հոլովակազմութեանը:

Մասնագիտական գրականութեան մէջ կայ նաեւ այն տեսակէտը, որ հին հայերէնը հիմնականում թեքական լեզու է՝ կցականութեան տարրերով: Սակայն այդ տեսակէտը միանշանակ չպէտք է ընդունել, քանի որ լեզուական որոշակի իրականութիւնների ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ որոշակի դէպքերում հին հայերէնում գերիշխում է կցականութիւնը (թեքականութեան տարրերով): Դա, մասնաւորապէս, երեւում է թուի քերականական կարգում. հին հայերէնում թուի քերականական կարգն արտայայտւում է հիմնականում մասնիկաւորմամբ, ուստի այդ ոլորտում նա ցուցաբերում է բացարձակ կցականութիւն[5]:

---

[3] Հ. Պետրոսեան, *Գոյականի թուի կարգը հայերէնում*, ԵՊՀ հրատ. Երեւան, 1972, էջ 119:

[4] Պետրոսեան, էջ 113:

[5] Թուի քերականական կարգը մասնիկաւորմամբ է արտայայտւում նաեւ.-
ա) ռուսերէնում յոգնակերտ մասնիկների դերով հանդէս են գալիս ы կամ и, а կամ я վերջաւորութիւնները. парта-парты, стена–стены, стол-столы, конь–кони, пуля-пули, дом–дома, озеро-озёра, поле-поля, море-моря.

ԴԵՐԱՆՈՒԱՆ ԹՈՒԻ ՏԻՊԱԲԱՆՈՒԹԻՒՆԸ

Դիտարկենք դերանուան թուի քերականական կարգի տիպաբանութիւնը հին հայերէնում:

Դերանուն խօսքի մասի թուակազմութիւնը որոշակիօրէն տարբերւում է գոյական, ածական եւ թուական անունների թուակազմութեան օրինաչափութիւնից. դերանունը թուակազմական տարբեր դրսեւորումներ ունի, որոնք տիպաբանական տարբեր յատկանիշեր են ցուցաբերում եւ տարբեր տեսանկիւնից համապատասխանում են տարբեր կառուցատիպերի լեզուների տիպաբանական չափանիշերին[6]:

Դերանուան համակարգում թուի քերականական կարգը բնութագրւում է որոշակի առանձնայատկութիւններով. ա) եզակի-յոգնակի ձեւերի տարբերմատութեամբ եւ տարահիմքութեամբ, ինչպէս՝ ես--մեք, նա--նոքա, դա--դոքա, դոյն--դոքին, սոյն--սոքին եւն., բ) ուղիղ եւ թեք հոլովների թուային հակադրութեան տարբեր արտայայտութեամբ[7], ինչպէս՝ ես--իմ--ինձ, մեք--մեր--մեզ, դուք--ձեր--ձեզ, նա--նորա--նմա եւն., գ) յոգնակիի տարածուած տիպերից տարբեր ձեւաւորմամբ, ինչպէս՝ ոմն--ոմ-ա-նք, իւր--իւր-ե-անք, ամեն--եքին, ամեն--եքեան եւն.:

Դերանուան հոլովման եւ թուակազմութեան դէպքում քերականական իմաստների արտայայտման միջոցները որոշակիօրէն փոխւում են. բացի մասնիկաւորումից թուի եւ հոլովի իմաստներն արտայայտւում են նաեւ տարահիմքութեամբ (արմատափոխութեամբ), ինչպէս՝ ես--մեք, սա—սոքա, իմն // ինչ--իրիք--իմիք--իւիք, զի՞--է՞ր--ի՞մ, յիմէ՞--ի՞ւ եւն., ինչպէս նաեւ այս մարզում գործում է քերականական իմաստների արտայայտման խառը տիպը (տարահիմքութիւն-մասնիկաւորում եւն.), ինչպէս՝ նա--նորա--նմա--ի նմանէ--նովաւ, դա--դորա--դմա--ի դմանէ--դովաւ եւն.:

Թուակազմութեան *մասնիկաւորման եղանակը* բնորոշ է դերանուան որոշ տեսակների, որոնք յոգնակի թուի իմաստն արտայայտում են **ք** մասնիկով կամ այդ տարրն ունեցող *բաղադրյալ այլ մասնիկներով,* ինչպէս՝ դու--դուք, իմ--իմք, իւր--իւրք, մեր--մերք, ձեր--ձերք, ո՞--ոյք, ոմն-ոմանք, այս--այսք // այսոքիկ, նոյն--նոյնք // նոքին եւն., իսկ *տարահիմքութիւնը (արմատափոխութիւնը) եւ իմաստների արտայայտման խառը տիպը*՝ դերանուան այլ տեսակների, ինչպէս՝ անձնական (ես--իմ--ինձ--յինէն--ինեւ,

---

բ) անգլերէնում՝ book-books, map-maps, witch-witches, city-cities, leaf-leaves, child-children.

գ) Լատիներէնում՝ tabulă-tabul-ae, lupus–lup-ï, verbum–verb-a, orätor–orator-ës: (Լ. Խաչատրեան, *Ընդհանուր լեզուաբանութեան դասընթաց*, «Զանգակ» հրատ., Երեւան, 2016, էջ 206-207):

[6] Հր. Աճառեան, *Լիակատար քերականութիւն հայոց լեզուի՝ համեմատութեամբ 562 լեզուների, հտր. 2*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1954, էջ 1-18:

[7] Գէորգ Ջահուկեան, *Ժամանակակից հայերէնի տեսութեան հիմունքները*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1974, էջ 213:

նա--նորա--նմա--նմանէ--նովաւ եւն.), ցուցական (սա--սորա--սմա--ի սմանէ-սովաւ) հարցական (զի՞նչ--է՞ր--հի՞մ//էրո՞ւմ--առ իմէ՞--զմէ՞--ի՞ւ) եւն.:

Ա) Անձնական դերանուան թուակազմութիւնը

Անձնական դերանունները թուակազմական անմիօրինակութիւն են ցուցաբերում[8]. որոշակի դէպքերում յստակ է մասնիկների դերը (իւր-իւրմէ--իւրեւ // երեամբ, նա--ի նմանէ--նովաւ), երկրորդ դէպքում մասնիկաւորումն ուղեկցւում է տարահիմքութեամբ եւ տարարմատութեամբ (ես--իմ--ինձ--յինէն--ինեւ), երբեմն էլ թուակազմական մասնիկները զետեղւում են բառի կառուցուածքում՝ փոխանակ եզրափակելու բառաձեւի կաղապարը. հմմտ.՝ նո-ք-ա, նո-ց-ա, զնո-ս-ա եւն., հազուադէպ բառաձեւն ստանում է կրկնակի յոգնակի մասնիկ, ինչպէս՝ նո-ք-ա > նո-ք-աւ-ք եւն.:

Անձնական դերանուան յոգնակին ցոյց է տալիս, որ տուեալ դէմքով ներկայացողը մէկից աւելին է. մէկից աւելի քանակային (քերականական) յատկանիշը վերցւում է խօսողի եւ այն անձանց նկատմամբ, որոնց անունից խօսողն արտայայտւում է, եւ այսպէս՝ միւս դէմքերի վերաբերեալ[9]:

Առաջին դէմքի *ես* անձնական դերանուան յոգնակին է *մեք*. ընդունուած է այդ ձեւը համարել տարահիմքութիւն, սակայն բառաձեւի արտայայտութեան պլանում յոգնակիակերտ **ք** մասնիկի առկայութիւնը ցոյց է տալիս, որ թուակազմական մակարդակում գործ ունենք նաեւ մասնիկաւորման եղանակի հետ: Յոգնակի թուի հոլովման յարացոյցում այլ օրինաչափութիւն է գործում (տարահիմքութիւն). սեռական՝ *մեր,* տրական՝ *մեզ,* սակայն յոգնակի գործիական հոլովում տարահիմքութեանը զուգորդում է մասնիկաւորման իրողութիւնը, ինչպէս՝ *մե-ք > մե-ւ-ք // մե-ա-ւ-ք (մեօք):*

Երկրորդ դէմքի *դու* անձնական դերանուան յոգնակին մասնիկաւոր է՝ *դու-ք,* յոգնակի թուի հոլովական համակարգում գործում է տարահիմքութիւն. սեռական՝ *ձեր,* տրական՝ *ձեզ,* յոգնակի գործիականում դարձեալ առկայ է մասնիկաւորման երեւոյթը՝ *ձե-ւ-ք // ձե-ա-ւ-ք (ձեօք):*

Երրորդ դէմքի *նա* դերանուան յոգնակին խառը կազմութիւն ունի, թեքականութեանը զուգահեռ նրա արտայայտութեան պլանում ակնյայտ է յոգնակիակերտ **ք** մասնիկի առկայութիւնը, ինչպէս՝ *նո-ք-ա:* Յոգնակի թուի թեք հոլովներում գործում է **ք-ց** հերթագայութիւնը՝ սեռ.-տր.՝ *նոցա,* հայցականում՝ **ք-ս** հերթագայութիւնը՝ *(զ)նոսա,* գործիականում հանդէս է գալիս **ք** մասնիկը՝ որպէս թուակազմական ցուցիչ՝ *նոքա-ւ-ք (նոքօ-ք):*

Երրորդ դէմքի անձնական դերանուան բառային տարբերակները՝ *ինքն* եւ *իւր,* յոգնակին կազմում են մասնիկաւորման եղանակով:

---

[8] Այս մասին տե՛ս՝ Ա. Բագրատունի, *Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց,* Վենետիկ, Ս. Ղազար, 1852, էջ 85-86:

[9] Պետրոսեան, էջ 41-42:

Այդ դերանունների յոգնակիակազմութիւնը տարբերւում է անձնական միւս դերանունների յոգնակի ձեւակազմութիւնից. դա մասնաւորապէս երեւում է յոգնակի հոլովական յարացոյցում, որտեղ գործում է անուանական հոլովակազմութիւնը: Յոգնակի ուղղական եւ գործիական հոլովներում թուի գաղափարն արտայայտւում է **ք** մասնիկի միջոցով՝ *ինքեան-ք, ինքեամ-ք-ք* եւ *իւրեան-ք, իւրեամ-ք-ք:* Միւս թեք հոլովներում գործում է **ք-g** հերթագայութիւնը, իսկ հայցականում՝ **ք-u**, ինչպէս՝ *ինքեան-g, յինքեան-g, (զ)ինքեան-u* եւ *իւրեան-g, յիւրեան-g, (զ)իւրեան-u:* Հմմտ.՝

Եւ *ինքեանք* իսկ հարքն մեր հպարտացան եւ անօրինացան (Նէեմ., Թ. 16)[10]: Զայս արարեալ շիջուցին *յինքեանց* զբազմափայլ ճառագայթն աստուածպաշտութեան[11]: Ոչ այլ ժառանգութիւն տալ նոցա, բայց զոր ունէինն՝ հաւասար տրոհել *յինքեանս* (Խոր., 193): Զոր առ *իւրեանսն* տեսանէին[12]: Նահապետ ազգին Սլկունեաց ամրանայր յամրոցին... ապաւէն առնելով *իւրեանց* զբնակիչս Սիմն կոչեցեալ լերինն (Խոր., 228):

Բ) Ցուցական դերանունների յոգնակերտութիւնը

Ցուցական դերանունները յոգնակի թուի իմաստն արտայայտում են տարբեր ձեւերով: *Սա, դա, նա* դերանունների յոգնակի թւում կարելի է ցոյց տալ յոգնակիակերտ **ք** մասնիկի դերը՝ *սո-ք-ա, դո-ք-ա, նո-ք-ա*[13]*:*

Ք յոգնակիակերտ մասնիկը հանդէս է գալիս յոգնակի գործիականում՝ ստեղծելով միեւնոյն բառաձեւում կրկնակի յոգնակերտներ՝ *սո-ք-ա-ւ-ք (սոքօ-ք), դո-ք-ա-ւ-ք (դոքօ-ք), նո-ք-ա-ւ-ք (նոքօ-ք):* Միւս հոլովներում գործում է **ք-g** հերթագայութիւնը, իսկ հայցականում՝ **ք-u**, ինչպէս՝ *սո-g-ա, դո-g-ա, նո-g-ա* եւ *(զ)սոսա, (զ)դոսա, (զ)նոսա:*

Այս, այդ, այն ցուցական դերանունները յոգնակի թւում ունեն ձեւակազմական տարբերակներ, որոնց արտայայտութեան պլանում ակնյայտ է **ք** մասնիկի յոգնակիակազմ դերը, ինչպէս՝ *այս-ք // այս-ո-ք-իկ, այդ-ք // այդ-ո-ք-իկ, այն-ք // այն-ո-ք-իկ*[14]*:*

---

[10] Աստուածաշնչական բոլոր մէջբերումները կատարուած են՝ *Աստուածաշունչ մատեան հին եւ նոր կտակարանաց*ից, հրատ.՝ Հայաստանի աստուածաշնչային ընկերութիւն, Մեծ Բրիտանիա, 1997:

[11] *Մովսիսի Խորէնացւոյ Պատմութիւն Հայոց*, տպ. Մնացական Մարտիրոսեանցի, Տփխիս, 1913, էջ 247: Այսուհետեւ բոլոր մէջբերումների էջերը կը նշուեն բնագրում, փակագծերի մէջ:

[12] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց*, տպ. Մնացական Մարտիրոսեանցի, Տփխիս, 1909, էջ 367:

[13] Հայր Արսէն Բագրատունին այդ դերանունների յոգնակի ձեւեր է համարում նաեւ *սայք, դայք, նայք* կազմութիւնները (Բագրատունի, էջ 88): Ակնյայտ է, որ այդ դերանունները եւս թուի իմաստն արտայայտում են մասնիկաւորման միջոցով:

[14] Հայագիտութեան մէջ *այս, այդ, այն* ցուցական դերանունների թուակազմութեան վերաբերեալ տարբեր տեսակէտեր կան: Բագրատունին նկատում է, որ «գտանին ուրեք ուրեք անսովոր հոլովքս ... յոգն. ուղ. *այսոք, այդոք, այնոք,* սեռ.

Յոգնակի թուի հոլովական իմաստներն արտայայտւում են **ք-g** եւ **ք-u** հերթագայութիւնների միջոցով, որ բնորոշ է անուանական հոլովման տիպին: Կարճ ձեւերը յոգնակի հայցականում թուակազմական **u** մասնիկ չեն ստանում ինչպէս՝ *այս-g//այս-ո-g-իկ, այդ-g//այդ-ո-g-իկ, այն-g//այն-ո-g-իկ, (զ)այս- // (զ)այս-ո-u-իկ, (զ)այդ- // (զ)այդ-ո-u-իկ, (զ)այն- // (զ)այն-ո-u-իկ*[15]:

Յոգնակի գործիականում թուի քերականական իմաստն արտայայտւում է **ք** մասնիկով, որը եզրափակում է բառաձեւի կաղապարը. նկատենք, որ գործիականի հոլովահիմքում դարձեալ առկայ է յոգնակերտ -ք մասնիկ, ինչպէս՝ *այսոքի-ւ-ք // այսոքիմ-ք-ք, այդոքի-ւ-ք // այդոքիմ-ք-ք, այնոքի-ւ-ք // այնոքիմ-ք-ք:* Հմմտ.՝

Զի Աստուած *այսոքիւք* հաճեսցի ընդ մեզ[16]: Առ *այսոքիւք* եւ առասպելք աշխարհիս մերոյ զբազմահմուտ Ասորին արդարացուցանեն (Խոր., 56):

Ցուցական դերանունների յոգնակի թուով գործածութիւնը պէտք է դիտարկել շարահիւսական մակարդակում, քանի որ այն պայմանաւորուած է յոգնակի *լրացեալներին համաձայնելու շարահիւսական յատկանիշով:* Գոյականների հետ գործածւում են *այս, այդ, այն, սոյն, դոյն, նոյն* դերանունները (*սա, դա, նա* դերանունները հանդէս են գալիս անկախ գործածութեամբ):

Վերոնշեալ դերանունները գոյականների հետ գործածւում են թէ՛ նախադաս եւ թէ՛ վերջադաս: Նախադաս գործածութեամբ յոգնակի ուղղական, հայցական, մասամբ էլ գործիական հոլովներում դերանունները մնում են եզակի[17]: Հմմտ.՝

Այս ագարակք – այսց ագարակաց – զայս ագարակս – յայսց ագարակաց – այսու ագարա–կաւք (օք) // այսոքիւք ագարակաւք (օք):

Եւ ոչ ինչ ընդհատ *յայսց պատուոց* տայ դայեկին իւրում Սմբատայ, բայց միայն յերկուց գնդացն (Խոր., 174): *Զայսց* երկուց *պատուիրանաց* կախեալ կան օրէնք եւ մարգարէք[18]: Եւ ի բոլորեսին *յայսոսիկ թուղթսն* վաւերական մատանի Վասակայ եղեալ էր (Եղ., 132):

տր. *այսոց, այդոց, այնոց,* գործ. *այսուք, այդուք, այնուք, այնիւք,* բաց. *յասոց, յայդոց, յայնոց…»* (էջ 90): Վարագ Առաքելեանը կարծում է, որ *այս, այդ, այն* դերանունները յոգնակի ուղղականում կարճ ձեւեր չունեն՝ *այսք, այդք, այնք* (*Գրաբարի քերականութիւն, հտր. 1*, «Վիամիր» ՍՊԸ հրատ., Երեւան, 2008, էջ 83):

[15] Բագրատունին նկատում է, որ երբեմն յոգնակի սեռականում հանդիպում է **ր** ձայնորդը, ինչպէս՝ *այնոցր, սոցայցր,* փոխանակ՝ *այնոց, սոցայց* (Բագրատունի, էջ 90):

[16] *Եղիշէի վարդապետի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1957, էջ 24:

[17] Լ. Խաչատրեան, Գ. Թոսունեան, *Գրաբարի դասագիրք*, «Զանգակ–97» հրատ., Երեւան, 2004, էջ 126:

[18] *Եզնկայ Կողբացւոյ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց*, Վենետիկ, Ս. Ղազար, 1826, էջ 277:

Յետադաս գործածութեան դէպքում դերանունները հանդէս են գալիս երկար ձեւով եւ թուով ու հոլովով համաձայնում են յոգնակի լրացեալին. վերջինս ստանում է դերանուան արմատական բաղաձայնը՝ *ագարակքս այսոքիկ – ագարակացս այսոցիկ –(զ)ագարակսս զայսոսիկ – յագարակացս յայսցանէ –ագարակաւքս այսոքիւք:* Հմմտ.՝

Արքն այնոքիկ ծառայք են Աստուծոյ բարձրելոյ (Եզն., 185): *Յաւուրսն յայնոսիկ: Մշակացն այնոցիկ*[19]: Ոմն Մորփիւղիկեայ միաբանեալ զասացեալ *կողմանս զայսոսիկ,* եւ գրգռի պատերազմ ընդ Վաղարշակայ (Խոր., 106): Ասաց նմա *զբանս զայսոսիկ* (Եղ., 114):

Ունեն անկախ գործածութիւն՝ Զի՞նչ գործիցեն *այնոքիկ,* որ վասն մեռելոցն մկրտեցան (Եզն., 293): Որոց անուանքն *են այսոքիկ* (Եղ., 178):

Հանդէս են գալիս իբրեւ նախադրութեան խնդիր՝ Ո՞չ ամենեքեան հոգիք հարկաւորք են ... ի սպասաւորութիւն *վասն այնոցիկ* (Եզն., 108):

Թուակազմական նոյն օրինաչափութիւնն է գործում *սոյն, դոյն, նոյն* դերանունների յոգնակի թվում՝ *սո-ք-ին //սոյն-ք, դո-ք-ին // դոյն-ք, նո-ք-ին // նոյն-ք*[20]*:*

Յոգնակի թուի թեք հոլովներում գործում է **ք-g** հերթագայութիւնը. եթէ յոգնակի ուղղականում **ք** մասնիկը թուակազմական ցուցիչ է, ապա այդ դերը թեք հոլովներում կատարում է **g** հոլովակերտը, ինչպէս՝ *սոցին, դոցին, նոցին,* սակայն թեք հոլովներում այդ դերանուններն ունեն տարբերակներ, որոնցից մէկի արտայայտութեան պլանում առկայ է կրկնակի **g** տարր. մի դէպքում այն յոգնակի իմաստի կրող է, միւս դէպքում՝ հոլովակերտի, որ դարձեալ յոգնակի իմաստ է արտայայտում, ինչպէս՝ *սոցին – սոցուն // սոցուն-g, դոցին - դոցուն // դոցուն-g, նոցին - նոցուն // նոցուն-g:* Յոգնակի հայցականում թուի քերականական իմաստն արտայայտւում է **ք-u** հերթագայութեան միջոցով՝ *(զ)սոսին, (զ)դոսին, (զ)նոսին:* Յոգնակի գործիականում առկայ է կրկնակի յոգնակերտ մասնիկ՝ **ք**, որոնցից մէկը առկայ է բառաձեւի հիմքում, միւսը՝ յոգնակի գործիականի հոլովակերտն է՝ *սոքիմ-ք-ք, դոքիմ-ք-ք, նոքիմ-ք-ք // նոքում-ք-ք:*

Յոգնակի գործիականը, որպէս օրինաչափութիւն, կազմւում է եզակի գործիականից՝ **ք** հոլովակերտի միջոցով արտայայտելով յոգնակի թուի իմաստ[21], սակայն այս ցուցական դերանունները յոգնակի գործիականը

---

[19] Հ. Գաբրիէլ Աւետիքեան, Հ. Խաչատր Սիւրմէլեան, Հ. Մկրտիչ Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի, հտր. Ա,* Վենետիկ, Ս. Ղազար, 1936, էջ 91:

[20] Բագրատունին յոգնակի ուղղականում ընդունում է նաեւ *նոքինք, սոքինք* ձեւերը (էջ 91):

[21] Ջահուկեանն այն տեսակէտն է յայտնում, որ «հայերէնի եզակի գործիականը կարող է ծագած լինել յոգնակի ձեւից՝ ք-ի՝ որպէս յոգնակի տարրի գիտակցուելու եւ այն եզակիից հանելու միջոցով, եթէ միայն չենթադրենք, որ հնդեւրոպական բարբառներում հակառակը տեղի չի ունեցել, այսինքն՝ եթէ յոգնակին չէր կազմուել մի հին կորած եզակիից, որ հայերէնը պահպանել է» (*Հին հայերէնի հոլով-*

կազմում են երկու եղանակով՝ երկու տարբեր հիմքերով: Նախ՝ եզակի գործիականից՝ *սովիմ-բ-ք, դովիմ-բ-ք, նովիմ-բ-ք,* երկրորդ՝ *սոքիմ-բ-ք, դոքիմ-բ-ք, նոքիմ-բ-ք* ձեւերը թեեւ եզակի գործիականի ձեւեր են, սակայն *եզակի այդ ձեւերի հիմքը յոգնակի ուղղականն է,* որի արտայայտութեան շրջանակներում կատարուել է մասնակի առնմանութիւն՝ *սոքի(ն>)մ-բ-ք, դոքի(ն>)մ-բ-ք, նոքի(ն>)մ-բ-ք,* կայ նաեւ *նոքում-բ-ք* ձեւը, որտեղ կատարուել է նաեւ ձայնդարձ՝ *ի>ու:*

Այս դերանունները գոյական անունների հետ գործածւում են միայն նախադաս եւ նրանց համաձայնում են թուով ու հոլովով. յոգնակի ուղղական, հայցական եւ գործիական հոլովներում դերանունները կարող են հանդէս գալ նաեւ եզակի թուով՝ *նոյն // նոքին ագարակք - նոցին ագարակաց - (զ)նոյն // զ)նոսին ագարակս - ի նոցունց ագարակաց - նովին ագարակաւք (օք):* Հմմտ.՝ Եղեն *նոքին* թագաւորք՝ ոմն ժամանակեան եւ ոմն յաւիտենական (Եզն., 1216): Կասկած ունէր տակաւին *ի նոցուն ի դահճացն* (Եղ., 181): *Նոքումբք ցուցմամբք*[22]: Զի նոյն աստուած է՝ որ արդարացուցանէ զթլպատութիւնն հաւատովք եւ զանթլպատութիւնն *նովին հաւատովք* (Եզն., 169): Ապա եւ կին թագաւորին եւս գրգռէր զթագաւորն *սովին բանիւք*[23]: Հանդէս են գալիս նաեւ ինքնուրոյն կիրառութեամբ: Հմմտ.՝

Նոքա կերպարանողք են, եւ սոքա զեղխք ... այլ կրօնիւք *նոյնք* եւ նոյնպիսիք (Եզն., 117): Եւ այլ ինչ բազում նման *սոցին* էր զԱստուծով (Եզն., 136):

Գ) Ստացական դերանունների յոգնակիակազմութիւնը

Դերանուան համակարգում յոգնակիակազմ **ք** մասնիկը անշեղօրէն գործում է *ստացական դերանունների* թուակազմութեան ոլորտում: Այդ դերանունների թուակազմական հիմքերը անձնական դերանուան սեռական հոլովաձեւերն են[24]. դրանք եզակի սեռականում բառաձեւից անցել են բառային մակարդակ, որոնց վրայ աւելանում է յոգնակիակերտ **ք** մասնիկը: Հմմտ.՝ *ես–իմ-ք, դու-քոյ-ք, իւր-իւր-ք, մեք–մեր-ք, դուք–ձեր-ք:*

Յոգնակի ուղղականում թուի քերականական իմաստն արտայայտւում է մասնիկաւորման միջոցով, որ գործում է միւս հոլովներում: Ստացական դերանունները պատկանում են անուանական հոլովման տիպին. հոլովական իմաստներն արտայայտում են մասնիկաւորմամբ, որոնք, ինչպէս նշել ենք, կատարում են երկակի գործառոյթ եւ քերականօրէն բազմի-

---

ման սիստեմը եւ նրա ծագումը, Երեւանի համալսարանի հրատ., Երեւան, 1959, էջ 224):

[22] Աւետիքեան-Սիւրմէլեան-Աւգերեան, *Նոր բառգիրք, հտր. Բ*, Վենետիկ, 1837, էջ 439:

[23] *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց*, տպարան օր. Նուարդ Աջամեանցի, Թիֆլիս, 1912, էջ 108:

[24] Հ. Աւետիսեան, Ռ. Ղազարեան, *Գրաբարի դասընթաց*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1976, էջ 118:

մաստ են. դրանք արտայայտում են հոլովի եւ թուի քերականական իմաստներ: Եթէ յոգնակի ուղղականում հոլովի եւ թուի քերականական իմաստներն արտայայտւում են **ք** մասնիկի միջոցով, ապա միւս հոլովներում այդ իմաստները դրսեւորւում են հերթագայութիւնների միջոցով, որ բնութագրական է հոլովման անուանական տիպին: Հմմտ.՝ իմք - իմոց - (զ)իմս - յիմոց, նմանապէս՝ մերք - մերոց.... , իւրք – իւրոց..., ձերք – ձերոց... եւն.[25]: *Քոյք* ստացական դերանունը թեք հոլովներում ունի զուգահեռ ձեւեր՝ քոց // քոյոց, ի քոց // ի քոյոց:

Բացառութիւն է կազմում յոգնակի գործիականը, որի հոլովական իմաստը դրսեւորւում է եզակի գործիական հոլովաձեւով, իսկ թուի իմաստը՝ **ք** մասնիկով: Հմմտ.՝ իմք – իմով-ք, քոյք – քով-ք // քոյով-ք, իւրք – իւրով-ք, մերք – մերով-ք, ձերք – ձերով-ք[26]:

Ստացական դերանունների յոգնակի գործածութիւնը պայմանաւորուած է շարահիւսական յատկանիշով. շարահիւսական մակարդակում այդ դերանունները գոյական անունների հետ ունեն թէ՛ նախադաս եւ թէ՛ վերջադաս շարադասութիւն եւ թուով ու հոլովով համաձայնում են յոգնակի լրացեալին: Հմմտ.՝

> Որ եւ սիրելի *իմոց* իսկ *ախորժակացս* է (Խոր., 1): Եւ դու լուիցես յերկնից, եւ քաւիչ լիցիս մեղաց *ծառայից քոց* (Բ Մնա., Զ, 27): Բանաս զձեռն քո, եւ լցուցանես զամենեսեան քաղցրութեամբ *կամօք քովք* (Սաղ., ՃԽԴ, 16): Իսկ դու խստացար ընդ իս, եւ *քովք կամօք*՝ առանց *իմոց կամաց* եղեր ընդ իս թշնամի (Բուզ., 141)[27]: ... Սատակել զնա ըստ բանին Տեառն, զոր խօսեցաւ ի ձեռն ծառայից *իւրոց մարգարէից* (Դ Թագ., ԻԴ, 3): Ի նա իւսացաւ սիրտ իմ ... եւ ես *կամօք իմովք* խոստոուան եղէց նմա (Սաղ., ԻԷ, 7):

Յոգնակի գործիականում ստացական դերանունները յոգնակի լրացեալի հետ հազուադէպ հանդէս են գալիս եզակի թուով: Հմմտ.՝ Ունի *քոյով կամօք* զՄիածնիդ քո զօրինակ (Ագաթ., 53): *Իւրով* անարատ *կրօնիւքն* (ՆՀԲ, 1, 874): Եւ անցին *զքոյով պատուիրանօքդ,* եւ անկան ի մահ՝ իւրեանց պատուիրանազանցութեամբն (Ագաթ., 188):

---

[25] Առաքելեանն ընդունում է նաեւ *իւր* դերանունից առաջացած *իւրայոց* եւ *իւրայովք* ձեւերը, որոնք հին հայերեն մատենագրութեան մէջ հազուադէպ գործածութիւն են ունեցել (էջ 86):

[26] Բագրատունին ածական դերանունների (իմա՝ ստացական դերանունների) շարքում ընդունում է նաեւ *սորա (սոցա), դորա (դոցա), նորա (նոցա)* ուղղականի ձեւեր եւ նկատում, որ *նորա* դերանուան պարագային «յոգնակի սեռականքդ գտանին երբեմն յորդութեամբ ձայնի կամ վրիպակաւ գրեալ՝ *նորայնց, նոցայնց.* բայց պարզ ուղղականն՝ *նորայն, նոցայն,* չիք» (էջ 93):

[27] Օրինաչափ է *քոյովք կամօք* ձեւ, քանի որ *քո* ստացական դերանունը նախադաս գործածուելիս հոլովւում է *քոյ* հիմքով (Ա. Աբրահամեան, *Գրաբարի ձեռնարկ,* «Լոյս» հրատ., Երեւան, 1976, էջ 87):

Դ) Որոշեալ դերանունների յոգնակիակազմութիւնը

Հին հայերէնում որոշեալ դերանունները (բացառութեամբ **ամենայն**ի) ելակէտային վիճակում յոգնակիակազմ են եւ արտայայտում են հաւաքական առարկաների ամբողջութիւն: Այդ դերանունները կազմւում են –եքին // *-եքեան* ածանցներով, որոնց արտայայտութեան պլանում առկայ է **ք** յոգնակերտ տարրը, ինչպէս՝ *ամեն-եքին, ամեն-եքեան, բոլոր-եքին, բոլոր-եքեան*[28]*:*

Յոգնակի թեք հոլովներում թուակազմական **ք** տարրը ենթարկւում է **ք-g** հերթագայութեան, հայցականում՝ **ք-u**, հմմտ. *ամենեքին // ամենեքեան – ամենեցուն//ամենեցունց, բոլորեքին//բոլորեքեան – բոլորեցուն//բոլորեցունց* եւ *զամենեսին // զաեմենեսեան, զբոլորեսին // զբոլորեսեան* եւն.:

Որոշեալ դերանունները հանդէս են գալիս առանձին շարահիւսական դերով, իսկ գոյական անունների լրացման դերում թուով եւ հոլովով չեն համաձայնում նրանց: Հմմտ.՝

Ամենեքին երկուորիք են եւ անորդի ոչ գոյ ի նոսա (Երգ., Զ, 5): Զնա պարտ էր իմանալ պատճառ իւրեանց եւ արարիչ *ամենեցուն* (Եզն., 129): Եւ այնպէս արկանէր ի գեհեն *զամենեսին* (Եզն., 246): Եւ զ*ամենեցունց* զկարգեալ թոշակն նուազեցուցանէին եւ քաղցիւ եւ ծարաւով տառապեցուցանէին զնոսա (Եղ., 21): Ի մարմնի *ամենեքեան* էին, այլ ի գործս մարմնոյ եւ հոգւոյ ոչ *բոլորեքեան* (Եզն., 295): Եւ լսես անդ զյարութիւնն ... զխոստումն երկրորդ գալստեանն՝ հրաշակերտ յարութիւն առնելով *բոլորեցունց* (Եղ.,13): Եւ ի *բոլորեսին* յայսոսիկ թուղթսն վաւերական մատանի Վասակայ եդեալ էր (Եղ.,132):

Յոգնակի գործիականում թուակազմական մասնիկները պահպանւում են, որոնք աւելանում են եզակի գործիականի ձեւերին. ընդ որում, իբրեւ հաւաքական իմաստի դերանուններ, դրանք եզակի հոլովաձեւեր չունեն, սակայն յոգնակի հոլովաձեւի կառուցուածքային վերլուծութիւնը հաստատում է, որ հաւանական է եղել նախագրային հայերէնում նրանց եզակի թուով գործածութիւնը: Այսպէս, յոգնակի *ամենեքում-բ-ք* եւ *բոլորեքում-բ-ք* ձեւերը հաստատում են, որ յոգնակի գործիականի **ք** մասնիկից առաջ *ամենեքում-բ* եւ *բոլորեքում-բ* բառաձեւերը եզակի գործիականի ձեւեր են, ընդ որում՝ կազմուած *ամենեքին* եւ *բոլորեքին* ձեւերից, որոնց վերջին **ն** ձայնորդը **բ** հոլովակերտից առաջ ենթարկուել է մասնակի առնմանութեան եւ վերածուել **մ** ձայնորդի, միաժամանակ տեղի է ունեցել նաեւ այլ կարգի հնչիւնափոխութիւն՝ **ի-ու**, հմմտ. *ամենեք-ի-ն-բ > ամենեք - ու - մ-բ,* որից՝ *ամենեքում-բ-ք:* Այլ կերպ ասած՝ յոգնակի գործիականում կարելի է ցոյց տալ յոգնակիակերտ կրկնակի մասնիկներ: Հմմտ.՝ Դարձեալ փութայ *ամենեքումբք* հանդերձ ըստ Քրիստոսի հետոցն վարել (Բուզ., 66): Յետ փոքու ժամանակի՝ աղէտք անցին *զամենեքումբք* (Խոր., 126):

---

[28] Բագրատունին այս բառերը դերանուան տեսակների մէջ չի զետեղում (էջ 85-94):

Ե) Հարցական եւ յարաբերական դերանունների յոգնակիակազմութիւնը

Հարցական դերանունների մի մասը յոգնակի թիւը կազմում է մասնիկաւորման եղանակով. որպէս ընդհանուր յոգնակիակերտ ցուցիչ՝ հանդէս է գալիս **ք** մասնիկը: Այդ դերանուններն են՝ *ո՞* եւ *ո՞վ,* որոնք համապատասխանաբար ունեն յոգնակի ուղղականի հետեւեալ ձեւերը.- *ո՞յ-ք* եւ *ո՞վ-ք:* Հմմտ.՝ *Ո՞* ելցէ մեզ առ քանանացին (Դատ., Ա, 1): *Ո՞յք* եմք՝ Աստուծոյ օրէնս դնելով (ՆՀԲ, 2, 502): *Ո՞վ* է սա որ ելեալ գայ սպիտակաւ (Երգ., Ը, 5): *Ո՞վք* են ճշմարիտ երկրպագուքն (ՆՀԲ, 2, 524):

Յաճախ *ո՞յք* ձեւը հանդէս է գալիս իբրեւ *ո՞* եւ *ո՞վ* դերանունների ընդհանուր յոգնակի: Հմմտ.՝ Եւ *ո՞յք* արդեօք այսպիսեաց ճառից առաջինք, եթէ ոչ ոք ի Հոմերոսէ պատմին (Խոր., 89): Չորրորդ՝ յորում ասեմք, թէ *ո՞յք* են գտօղք տեսակաց ուսումնականին[29]:

Յոգնակի սեռական-տրականում գործում են **ք-ց**, հայցականում՝ **ք-ս** հերթագայութիւնները՝ հոլովի եւ թուի իմաստներն արտայայտելու համար: Հմմտ.՝ *ո՞յք – ո՞յց – ո՞յց- (զ)ո՞յս – յո՞յց:* Հմմտ. Զո՞րս յայտնեցից եւ յաղագս *ո՞յց* նշանակեցից (Նար., 66)[30]:

Ո՞//ո՞վ հարցական դերանունների յոգնակի գործիականը պակասաւոր ձեւ է. հոլովական այդ իմաստով գործածւում է *որ* յարաբերական դերանուան յոգնակի գործիականը, որ մասնիկաւոր կազմութիւն է՝ *որո՞վ-ք:*

Հարցական դերանուն է համարւում նաեւ *քանի՞* բառը, որի յոգնակին մասնիկաւոր կազմութիւն է՝ *քանի՞-ք:* Յոգնակի թուի հոլովական իմաստները դարձեալ արտայայտւում են **ք-ց** եւ **զ-ս** հերթագայութիւններով, ինչպէս՝ *քանեա՞ց – (զ)քանի՞ս – ի քանեա՞ց*[31]*:* Հմմտ. *Քանի՞* նկանակ հաց ունիք, եւ նոքա ասեն՝ Եւթն (Մար., Ը, 5): *Քանեա՞ց* կանանց զերկունս ի ծնեցելոցն շնորհ դիւրաւ ամբողջ ապրեցուցի (ՆՀԲ, 2, 979): Պարտ է խնդրել, թէ *քանի՞ս* ունի նշանակութիւնս հոմանունն (ՆՀԲ, 2, 979):

Յոգնակի գործիականում, որպէս թուակազմական ցուցիչ, հանդէս է գալիս **ք** յոգնակերտը, որ աւելանում է եզակի գործիականին, ինչպէս՝ *քանեա՞ւ – քանեա՞ւ-ք:*

Յոգնակի թիւը մասնիկաւորմամբ է արտայայտում նաեւ *որ* յարաբերական դերանունը՝ *որ-ք,* որ հանդէս է գալիս նաեւ հարցական դերանուան արժէքով*:* Հմմտ.՝ *Որք* ի խաւարին եւ ի միգին իցեն՝ տեսցեն աչք կուրացելոցն (Եսայ., ԻԹ, 18): Վարսք քո իբրեւ զերամակս այծից, *որք* երեւեցան

---

[29] Դաւիթ Անյաղթ, *Սահմանք իմաստասիրութեան*, ՀՍՍՌ ԳԱ հրատ., Երեւան, 1960, էջ 126:

[30] Գրիգոր Նարեկացի, *Մատեան ողբերգութեան*, տպ. Ստ. Տէօքմէճեանի, Պուենոս Այրէս, 1948, էջ 66:

[31] Հարցական եւ յարաբերական դերանունները դերանուան առանձին տեսակներ են համարում Աբրահամեանը (էջ 37-9) եւ Առաքելեանը (էջ 86), իսկ Աւետիսեանն ու Ղազարեանը դրանք միաւորում են դերանուան մի տեսակի մէջ (էջ 121):

ի Գաղաադէ, Ատամունք քո իբրեւ զերամակս կտրելոց, *որք* ելանեն ի լուալեաց (Երգ., Դ, 1-2): Ըստ Աստուծոյ արժանեաց *ո՞րք* արժանաւոր իցեն պատմիչ լինել (Եզն., 239):

Յոգնակի թուի հոլովական իմաստները դարձեալ արտայայտւում են **ք-g** եւ **ք-u** հերթագայութիւններով, ինչպէս՝ *որք – որոց – (զ)որս – յորոց:* Հմմտ.՝ *Որոց* ոգիքն թուլացեալ են յերկնաւոր առաքինութենէն՝ յոյժ ընդ ահիւ անկեալ է բնութիւն մարմնոյ (նոցա) (Եղ., 14): *Յորոց* եւ իմաստունքն տեղի տուեալ փախչին ի նոցանէ (Եղ., 8):

Յոգնակի գործիականում ունի *որով-ք* մասնիկաւոր կազմութիւնը, որ դիտարկեցինք հարցական դերանունների հատուածում: Հմմտ.՝ Զհիւղեայն կարծիս, *որովք* Յոյնքն մոլորեցան, բաւական համարեսցուք առաջնոց բանիցն յանդիմանութեամբ վճարել (Եզն., 111): *Որովք յիշատակօք* միայն վարի յօգտակարն (Եզն., 174):

Զ) Փոխադարձ եւ անորոշ դերանունների յոգնակիակազմութիւնը

Մասնիկաւորումը գործում է նաեւ փոխադարձ դերանունների թուի կարգում. այդ դերանունները անեզական անուններ են, չունեն յոգնակի ուղղականի ձեւ[32]. դրանց ելակէտային վիճակը յոգնակի սեռական հոլովածեւն, որ հոլովի եւ թուի քերականական իմաստներն արտայայտում է **g** մասնիկի միջոցով, ինչպէս՝ *միմեանց, իրերաց:* Ակնյայտ է, որ այս ձեւերը ծ-գում են նախագրային հայերէնի *միմեանք, իրեարք* ձեւերից, որոնք ժամանակի ընթացքում դուրս են եկել դերանուան ձեւաբանական համակարգից[33]: Այդ ձեւերի յոգնակի ուղղականի **ք** մասնիկից կարելի է բխեցնել յոգնակի սեռականի **g** մասնիկը, որ հետեւանք է **ք-g** հերթագայութեան՝ քերականական արժէքով: Այդ դերանունների թեք հոլովներում՝ նոյնպէս դիտարկելի են **ք-g**, հայցականում՝ **ք-u** հերթագայութիւնները: Հմմտ.՝ Եւ յորժամ պատահէին *միմեանց*՝ դարձեալ միւսանգամ *զմիմեանս* սատակէին (Եղ., 118): Դեռ եւս *զիրեարս* սատակէին (Եղ., 180): Գազանացեալ զօրութեամբ *յիրեարս* յարձակէին (Եղ., 116):

Յոգնակի գործիականը քերականական իմաստն արտայայտում է **ք** մասնիկի միջոցով, որ աւելանում է անգործածական եզակի ձեւերին՝ *միմ-*

---

[32] Աբրահամեան, էջ 78. նաեւ՝ Աւետիսեան-Ղազարեան, էջ 120:

[33] Աճառեանը *միմեանց* դերանունը բխեցնում է *միմեանք* ձեւից՝ նկատելով, որ «գործածական է միայն հոլովեալ ձեւով... եւ կազմուած է *մի* բառի կրկնութեամբ» (*Հայերէն արմատական բառարան, հտր. 3*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1977, էջ 317): Աճառեանը եւ Ջահուկեանը *իրերաց* դերանունը դուրս են բերում *իրեար* ձեւից (Աճառեան, *Հայերէն արմատական բառարան, հտր. 2*, ԵՊՀ հրատ., Երեւան, 1973, էջ 251. նաեւ՝ Գ. Ջահուկեան, *Հայերէն սպուգաբանական բառարան*, «Ասողիկ» հրատ., Երեւան, 2010, էջ 288): Բոլոր դէպքերում, *իրերաց* բառածեւը ցոյց է տալիս, որ ելակէտային վիճակում այն ունեցել է *իրեարք* մասնիկաւոր ձեւը:

եամ-բ-ք, իրերա-ւ-ք: Հմմտ.՝ Սկսան իբրեւ արբեալք անզգայք *զմիմեամբք* ելանել ի բանից պատասխանիս (Եղ., 161): *Զմիմեամբք* դիզանէին ի միմեանց վերայ (Ագաթ., 90):

Ոմն, ոք անորոշ դերանունների յոգնակի ուղղականը կազմւում է **ք** մասնիկի միջոցով՝ *ոմանք:* Հմմտ.՝ Պատասխանի ետուն նմա *ոմանք* ի դպրացն (Ղու., Ի, 39): Եւ *ոմանք* յերկուացան (Մատթ., ԺԸ, 17):

Յոգնակի սեռ.-տրականում հոլովի եւ թուի քերականական իմաստներն արտայայտւում են **ք-g**, հայցականում՝ **ք-u** հերթագայութիւնների միջոցով, ինչպէս՝ *ոմանք- ոմանց – (զ)ոմանս – յոմանց:* Հմմտ.՝ Եւ խորհեալ *ոմանց* ի Հայ նախարարացն՝ լսելի լինէր խորհուրդն[34]: Արգելեցին *զոմանս* ի նոցանէ ձեռս յետս կապելով (Եղ., 20): Լսէր *յոմանց* զխորհեալսն Հայոց (Փարպ., 61):

Ոք դերանուան յոգնակի գործիականը պակասաւոր յարացուցային ձեւ է:

Յոգնակի թիւը մասնիկաւորմամբ է արտայայտում նաեւ *այլ* անորոշ դերանունը՝ *այլ-ք*, որի թեք հոլովներում եւ հայցական նոյնպէս գործում է **ք-g** եւ **ք-u** հերթագայութիւնը: Յոգնակի թուով հանդէս է գալիս ինչպէս առանձին կիրառութեամբ, այնպէս էլ գոյականական անդամի լրացման դերով, ինչպէս՝

Զայլս եւս զարհուրեցուցանել կամիս (Ագաթ., 65): Յաղագս զի ոչ սակս Ադամայ եւ *այլոց* նահապետացն միաբանեցան *այլքն* ի պատմագրաց (Խոր., 13): Բազում արք անուանիք ... հոգացան ոչ միայն զգիրս դիւանացն *այլոց* ազգաց թագաւորացն եւ զմեհենիցն յեղուլ ի յոյն բան (Խոր., 8):

Այլ դերանունը յոգնակի թուով գործածւում է յոգնակի լրացեալներին համաձայնելու հանգամանքով, ինչպէս՝ Զոր պատմէ Պաղեփատոս եւ Պուրփիւր եւ *այլք բազումք* (Խոր., 205): Գողք եւ սպանողք, եւ կնահանք եւ *այլք այսպիսիք* փախուցեալ անդր անկա–նէին (Խոր., 288): Չու արարեալ գնայ յերկիրն Արարադայ ... հանդերձ որդւովք իւրովք ...եւ *այլովք ընդոծնօք* (Խոր., 33): Խռովութիւնքն յառաջագոյն յառնէր առ *այլովք ... թագաւորօք* (Եղ., 78):

Հաւաքական գոյականների լրացման դերում *այլ* դերանունը հանդէս է գալիս յոգնակի թուով: Հմմտ.՝ Օր մի յաւուրց տարեկան, դիմեաց գալ թագաւորն Տիրան հանդերձ *այլովք աւագանովն* մտանել յեկեղեցին (Բուզ., 28):

Դերանուան թուակազմութեան ուսումնասիրութիւնը կարող է ամբողջացնել անուն խօսքի մասերի թուի քերականական կարգի տիպաբանութեան բնութագրութիւնը, որը լեզուների ձեւաբանական տիպաբանութան չափորոշիչներից է:

---

[34] *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան*, տպ. Մնացական Մարտիրոսեանցի, Տփխիս, 1904, էջ 119:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Հին հայերէնում դերանուան թուի քերականական կարգի ուսումնասիրութիւնը ցոյց է տալիս, որ դերանուանական բառաձեւերի արտայայտութեան պլանում գործում է մասնիկաւորումը, տարահիմքութիւնը, տարամատութիւնը, ինչպէս նաեւ քերականական իմաստների արտայայտման խառը տիպը:

Անձնական եւ ցուցական դերանունների յոգնակի թիւն արտայայտւում է խառը տիպով (տարահիմքութիւն-մասնիկաւորում), ցուցական, ստացական, անորոշ, հարցական եւ յարաբերական դերանունների յոգնակի թիւը կազմւում է յոգնակիակերտ **ք** մասնիկի միջոցով, որոնց թեք հոլովաձեւերում եւ հայցականում գործում են **ք-ց** եւ **ք-ս** հերթագայութիւնները: Փոխադարձ դերանունների յոգնակիի ուղղականը պակասաւոր յարացուցային ձեւ է, դրանց հոլովի եւ թուի քերականական իմաստներն արտայայտւում են յոգնակի սեռական - տրականում **ք-ց**, յոգնակի հայցականում՝ **ք-ս** հերթագայութեամբ. այդ բառաձեւերի արտայայտութեան պլանում յոգնակերտ **ք** մասնիկը դրսեւորւում է յոգնակի գործիականում: Որոշեալ դերանունները յոգնակիակազմ են. դրանք անեզական բառեր են, որոնց արտայայտութեան պլանում յոգնակիակերտ մասնիկներն անբաժան են բառի կառուցուածքից:

Դերանուան թուակազմութեան ուսումնասիրութիւնը որոշակիօրէն խմբագրում է հին հայերէնի տիպաբանութեան թեքականութեան տեսութիւնը՝ ցոյց տալով, որ քերականական իմաստների արտայայտման միջոցներից կարեւոր դեր ունի կցականութիւնը (մասնիկաւորումը), որոշակի դէպքերում էլ թեքականութիւնն ուղեկցւում է տարահիմքութեան եւ կցականութեան տարրերով:

THE TYPOLOGY OF THE GRAMMATICAL CATEGORY OF A NUMBER OF PRONOUNS IN OLD ARMENIAN

(Summary)

LALIK KHACHATRYAN (lingualal51@mail.ru)

The study of the grammatical category of a number of pronouns in Old Armenian shows that in the plane of expression of grammatical meanings of pronouns there is agglutination, as well as suppletivism/suppletion (diverse roots, diverse stems) and the mixed type.

The pluralia tantum of personal and demonstrative pronouns is expressed by a mixed type: suppletivism with agglutination; ես - մեք, նա - նոքա, սա- սոքա – սոցա - զսոսա. The pluralia tantum of possessive, indefinite, interrogative and relative pronouns is formed by the plural-particle *-kh;* իմ - ք, ձեր - ք, ոման- ք, ո՞յ - ք, որ - ք, in which the oblique cases and accusative have available alternations *kh-tc, kh-s;* իմո - g, զիմ - u, ձերո – g, զձեր - u, ոման – g, զոման - u, ո՞յ - g, զո՞յ - u, որո - g , զոր - u.

The pluralia tantum of reciprocal pronouns is a less provocative form, and the grammatical meanings of the case and number are expressed by the *kh-tc* alternation*;* միմեան - g, իրերա - g, in the plural-accusative in the *kh-s* sequence; զմիմեան - u, զիրեար - u.

In the plane of expression of those words, the plural particle *-kh* appears in the instrumental case; միմեամբ - ք, իրերաւ - ք.

Definite pronouns are plural-structured and do not have singularia tantum. The plural particles are inseparable from the word structure; բոլորեքին // բոլորեքեան, ամենեքին // ամենեքեան.

The study of the structure of a number of pronouns somewhat modifies the theory of inclination of the typology of Old Armenian, showing that agglutination may play a dominant role in the expression of grammatical meanings. On the other hand, in some cases inclination is accompanied by elements of agglutination and suppletivism (diverse roots and diverse stems).